ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

# ԱՄՄԲ-ԳՀԱՊՁԲ-23/12 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Մեծամոր** **2 մայիսի 2023թ.**

2023թ-ի ապրիլի 25- մայիսի 2-ը ՀՀ, Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, ք. Մեծամոր, Վարչական կենտրոն թիվ 1 շենք հասցեում գտնվող «Մեծամոր համայնքի բարեկարգում» ՀՈԱԿ-ի շենքում տեղի ունեցավ սեղմված բնական գազի ձեռքբերման ԱՄՄԲ-ԳՀԱՊՁԲ-23/12 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Հ. Պետրոսյան | «Մեծամոր համայնքի բարեկարգում» ՀՈԱԿ-ի ճարտարագետ, |
| Ա. Շամբանդարյան | «Մեծամոր համայնքի բարեկարգում» ՀՈԱԿ-ի շին. վերանորոգման տեղամասի պետ, |
| Հ. Գևորգյան | «Մեծամոր համայնքի բարեկարգում» ՀՈԱԿ-ի վարորդ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Հ. Պետրոսյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Ա. Առաքելյանը՝ «ՓՐՈՄՈՒՌՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
3. Ընթացակարգին ներկայացված հայտեր պարունակող ծրարները գնահատելու մասին:
4. Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին՝ դրանց համապատասխանության մասին:
5. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:

6. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:

7. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

8. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

9. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 2. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2023թ-ի ապրիլի 25-ին, ՀՀ, Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, ք. Մեծամոր, Վարչական կենտրոն թիվ 1 շենք հասցեում գտնվող «Մեծամոր համայնքի բարեկարգում» ՀՈԱԿ-ի գրասենյակում ժամը 12:40-ին Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված նախահաշվային արժեքը.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Սեղմված բնական գազ | 5,600,000.00 |

Հանձնաժողովի քարտուղարը հաղորդեց տեղեկատվություն գրանցամատյանում կատարված նշումների մասին և Հանձնաժողովի նախագահին փոխանցեց հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտերը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՄՄԲ-ԳՀԱՊՁԲ-23/12 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձ/ը/ինք/ /այսուհետ՝ նաև մասնակից/ներ/ը/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցեներ | Հեռախոս | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Արջաղբյուր» ՍՊԸ | Արմավիրի մարզ, համայնք Մրգաշատ՝ Արմավիր-Երևան մայրուղի 75 ԱԳԼՃԿ | 098976772 | animeliqsetyan92@mail.ru | 04420155 |

Հանձնաժողովը գնահատեց հայտ պարունակող ծրար/ներ/ը կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակից/ներ/ի կողմից ներկայացված հայտ/եր/ը կազմված և ներկայացված է/են Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, և բացեց համապատասխան գնահատված հայտ/եր/ը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 4. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԾՐԱՐՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ՝ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում Ընթացակարգի հրավերով պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ.

«Արջաղբյուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմում-հայտարարության փաստաթղթում, համաձայն՝ Հավելված 1-ի, բացակայում է սույն գնման ընթացակարգի հրավերով պահանջվող մասնակցին սպասարկող բանկի և բանկային հաշվեհամարի վերաբերյալ տեղեկատվությունը:

«Արջաղբյուր» ՍՊԸ -ի կողմից ներկայացվել է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր համաձայն հրավերի հավելված 1.3-ի, սակայն հրավերով սահմանված ընթացակարգի մասնակցության դիմումի լրացման կարգի համաձայն ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը դիմում հայտարարությունը լրացնելիս նշում է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի համաձայն՝ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցած՝ իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղում:

Արջաղբյուր» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել "սույն գնման ընթացակարգին մասնակցության հայտով ներկայացված Հավելված 1.1-ով ներկայացվող առաջարկվող ապրանքնի ամբողջական նկարագրերը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի անվանումը | | Մասնակցի անվանում | Գնման հայտով սահմանված Պայմանագրի կատարման առավելագույն գինը | Մասնակիցների առաջարկած գները | | |
|---|---|---|---|---|---|---|
| N | Հայերեն | | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | Սեղմված բնական գազ | «Արջաղբյուր» ՍՊԸ | 5,600,000.00 | 4,600,000.00 | 920,000.00 | 5,520,000.00 |

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

26.04.2023թ-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

2. Նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով և առաջարկել մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված շտկման ենթակա անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները.

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

28.04.2023թ-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. Մասնակից/ներ/ի կողմից սահմանված ժամկետներում ներկայացվել է արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

Կողմ՝ 2, դեմ՝ 0

28.04.2023թ -ին Հանձնաժողովը որոշեց.

1. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:

2. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

3. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1 | «Արջաղբյուր» ՍՊԸ | բավարար |

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

28.04.2023թ -ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից, որոշել և հայտարարել ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներին, որոնք ներկայացված են ստորև բերվող աղյուսակում.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի N | Մասնակցի անվանում | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է "X" | Մասնակցի առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|
| 1 | «Արջաղբյուր» ՍՊԸ | X | 4,600,000.00 |

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 6. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների հայտարարել սույն արձանագրության 5-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի

պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցներին:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Է. Ավագյանը Հանձնաժողովին ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ անգործության ժամկետ չսահմանել :

2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 8. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը: Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,

2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Հ. Պետրոսյան ______________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Ա. Շամբանդարյան ______________

Հ. Գևորգյան ______________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Ա. Առաքելյան ______________